ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ապահովելու պայմաններ ցուցահանդես-տոնավաճառների գործունեության աշխատանքների համակարգման համար,

Համագործակցությունում ինտեգրացիոն գործընթացների զարգացման եւ ընդհանուր տնտեսական ու տեղեկատվական տարածության ձեւավորմանը օժանդակելու համար միջազգային շփումների ամրապնդման, արդյունաբերությունում, գյուղատնտեսության եւ տնտեսության այլ ճյուղերում, գիտության, տեխնիկայում եւ մշակույթում նվաճումների քարոզչության նպատակներով, ինչպես նաեւ Համագործակցության առեւտրատնտեսական կապերի, սոցիալական ոլորտի զարգացմանն օժանդակելու համար, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցության ցուցահանդես-տոնավաճառների գործունեության մշտապես գործող Միջպետական խորհուրդ, այսուհետ՝ Խորհուրդ:

Սույն Համաձայնագրի ստորագրումից հետո մեկամսյա ժամկետում Կողմերը Խորհուրդ են գործուղում իրենց լիազոր ներկայացուցիչներին:

ՀՈԴՎԱԾ 2

Խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է Անկախ Պետությունների Համագործակցության ցուցահանդես-տոնավաճառների գործունեության Միջպետական խորհրդի Կանոնադրության հիման վրա, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը կօժանդակեն Խորհրդի կողմից կազմակերպվող եւ անցկացվող ցուցահանդեսներում եւ տոնավաճառներում մասնակցող ազգային ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Խորհրդի նստավայրը Մոսկվա քաղաքն է:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ պետությունների ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին միանալու մասին փաստաթղթերը փոխանցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7

Ցանկացած Կողմ կարող է հայտարարել սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով:

Կատարված է Մինսկ քաղաքում 1995 թվականի մայիսի 26-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Անկախ Պետությունների Համագործակցությունում
ցուցահանդես-տոնավաճառների գործունեության
զարգացման մասին 1995 թվականի մայիսի 26-ի
Համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անկախ Պետությունների Համագործակցության ցուցահանդես-տոնավաճառների գործունեության Միջպետական խորհուրդը, այսուհետ՝ Խորհուրդ, ստեղծվում է Համագործակցությունում ինտեգրացիոն գործընթացների զարգացման եւ ընդհանուր տնտեսական ու տեղեկատվական տարածության ձեւավորմանը օժանդակելու համար միջազգային շփումների ամրապնդման, արդյունաբերությունում, գյուղատնտեսության եւ տնտեսության այլ ճյուղերում, գիտության, տեխնիկայում եւ մշակույթում նվաճումների քարոզչության, առաջավոր փորձի փոխանակման, սոցիալական ոլորտի զարգացման, Համագործակցության մասնակից պետությունների փոխշահավետ երկկողմ եւ բազմակողմ բնույթի առեւտրատնտեսական կապերի համար պայմանների հաստատման նպատակներով ցուցահանդես-տոնավաճառների գործունեության բնագավառում աշխատանքների համակարգման ապահովման համար:
Խորհուրդը մշտապես գործող համակարգող-խորհրդակցական մարմին է:
Իր գործունեությունում Խորհուրդը հաշվետու է Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեին, ղեկավարվում է Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի, Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեի որոշումներով, Համագործակցության շրջանակներում կնքված միջպետական եւ միջկառավարական համաձայնագրերով, սույն Կանոնադրությամբ:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Խորհրդի գործունեության հիմնական ուղղություններն են.
Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության ժամանակակից գաղափարախոսության մշակում եւ իրականացում,
Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ցուցահանդեսների եւ տոնավաճառների, միջոցառումների, որոնք ուղղված են Համագործակցությունում ինտեգրացիոն գործընթացների բանական զարգացմանը, փոխադարձ ներդրումների, միջազգային շփումների անցկացում, առաջավոր փորձի փոխանակում,
օժանդակություն Համագործակցության մասնակից պետությունների ապրանք

արտադրողների եւ արտադրանք սպառողների միջեւ անմիջական կապերի հաստատմանը, նրանց միջեւ փոխադարձ հաշվարկների կատարելագործմանը, քլիրինգային հարաբերությունների զարգացմանը, աջակցություն ձեռներեցությանը,

օժանդակություն Համագործակցություն անշարժ գույքի եւ ֆոնդային ընդհանուր շուկաների ստեղծմանը,

ցուցահանդես-տոնավաճառների գործունեության բնագավառում Համագործակցության մասնակից պետությունների ազգային օրենսդրությունների մշակման եւ համաձայնեցման համար առաջարկությունների մշակում:

3. Խորհրդի հիմնական գործառույթներն են.

Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության զարգացմանն ուղղված միջոցների իրականացում,

օժանդակություն Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության իրականացման համար կազմակերպչատեխնիկական միջոցառումների անցկացմանը եւ ֆինանսական աջակցությանը,

օժանդակություն ցուցահանդեսներում, տոնավաճառներում գիտատեխնիկական մշակումների, "նոու-հաու"-ների, ապրանքային արտադրանքի դեպի միջազգային շուկա առաջխաղացմանը,

ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպման եւ անցկացման համար տեղեկությունների եւ մեթոդական հրատարակումների եւ Խորհրդի իրավասությանը վերաբերող այլ տեղեկությունների ապահովում եւ փոխանակում, Համագործակցության մասնակից պետությունների մասնակցությամբ ցուցահանդեսների եւ տոնավաճառների վերաբերյալ միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում, այդ թվում՝ օգտագործելով Համագործակցության տեղեկատվության փոխանակման ավտոմատացված համակարգը,

օժանդակություն միջազգային ցուցահանդեսներում, տոնավաճառներում Համագործակցության մասնակից պետությունների մասնակցությանը,

փոխգործակցության իրականացում Համագործակցության միջպետական (միջկառավարական) մարմինների, պետական, գիտական եւ հասարակական մարմինների ու կազմակերպությունների, Համագործակցության տնտեսվարող սուբյեկտների հետ,

Խորհրդի իրավասությանը վերաբերող արտաքին տնտեսական, հրատարակչական, գովազդային եւ գործունեության այլ տեսակների իրականացում,

ցուցահանդես-տոնավաճառների գործունեության մասնագետների որակավորման բարձրացման կազմակերպում:

4. Խորհուրդը, իր գործառույթների իրականացման համար, իրավունք ունի.

ցուցահանդես-տոնավաճառների գործունեության բնագավառում Համագործակցության մասնակից պետությունների համապատասխան մարմիններից տեղեկություններ ստանալ,

տեղեկացնել Համագործակցության մասնակից պետություններին Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության զարգացման մասին,

առաջարկություններ մտցնել Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության կատարելագործման վերաբերյալ,

ցուցահանդես-տոնավաճառների գործունեության կազմակերպման համար ստեղծել աշխատանքային խմբեր,

միջազգային ցուցահանդեսներում եւ տոնավաճառներում մասնակցելու նպատակով երաշխավորություններ մշակել,

մշակել եւ առաջ քաշել երաշխավորություններ, վերլուծական եւ տեղեկատվական նյութեր, տեղեկանքներ, որոշումների նախագծեր,

ցուցահանդեսների եւ տոնավաճառների գործունեության հարցերով Համագործակցության մարմինների քննարկմանը ներկայացվող ակտերի նախագծերի փորձագիտական գնահատականի իրականացում,

հրատարակել համապատասխան նյութեր ցուցահանդեսների եւ տոնավաճառների գործունեության հարցերով,

Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում անցկացնել ցուցահանդեսների եւ տոնավաճառների ատեստացիա:

3. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5. Խորհուրդը ձեւավորվում է Համաձայնագրի մասնակից պետությունների պետական գործադիր մարմինների լիազոր ներկայացուցիչներից, ցուցահանդես-տոնավաճառների համալիրների, հասարակական կազմակերպությունների եւ տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներից: Խորհրդի անդամներին գործուղում են Համաձայնագրի մասնակից պետությունները: Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն, անկախ խորհուրդ գործուղած անդամների թվից, ունի մեկ որոշիչ ձայն:

Խորհրդի կազմի մեջ են մտնում նախագահը, նրա տեղակալները, Համաձայնագրի մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչները՝ անդամները:

Խորհրդի նախագահին եւ նրա տեղակալներին ընտրում են Խորհրդի անդամները:

6. Խորհրդի նիստերը անց են կացվում ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին երկու անգամ:

Խորհրդի նիստը իրավասու է որոշումներ ընդունել, եթե այդտեղ ներկա են Համաձայնագրի մասնակից պետությունների կեսից ավելին:

7. Խորհուրդը քննարկում է Համագործակցությունում ցուցահանդես-տոնավաճառների գործունեության կարեւորագույն հարցեր, հաստատում է Համագործակցության շրջանակներում Խորհրդի կողմից կազմակերպվող ցուցահանդեսների եւ տոնավաճառների պլանը, ղեկավարում է Գործադիր տնօրինության աշխատանքը, լուծում է իր իրավասության մեջ մտնող այլ հարցեր:

8. Խորհուրդը գլխավորում է նախագահը, որը կազմակերպում է դրա աշխատանքը:

Նախագահը Խորհուրդը ներկայացնում է Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեի նիստերին, ինչպես նաեւ Խորհրդի գործունեության հետ կապված հարցերով Համագործակցության մասնակից պետությունների հետ հարաբերություններում:

9. Խորհրդի կողմից քննարկելու համար առաջարկությունների պատրաստման նախաձեռնությունը պատկանում է Համագործակցության միջպետական (միջկառավարական) մարմիններին, Գործադիր տնօրինությանը:

Առաջարկությունների պատրաստման եւ քննարկման ընթացակարգը սահմանում է Խորհուրդը:

10. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդի նիստում ընդունվող որոշումը հակասում է Համաձայնագրի որեւէ մասնակից պետության շահերին եւ այդ պետության լիազոր ներկայացուցիչները դեմ են քվեարկում, ապա այդ որոշումը պարտադիր չի լինի նրա պետական կառույցների համար:

11. Խորհրդին կից գործում է Գործադիր տնօրինությունը, որը ղեկավարում է Գործադիր տնօրենը: Նա, ըստ պաշտոնի, Խորհրդի նախագահի տեղակալ է:

Գործադիր տնօրենին նշանակում եւ ազատում է Խորհուրդը:

Գործադիր տնօրինությունը իրավաբանական անձ է եւ գործում է ինքնահատուցման սկզբունքի վրա:

Գործադիր տնօրինությունը կյանքի է կոչում Խորհրդի որոշումները, ընդունում է ցուցահանդեսների եւ տոնավաճառների կազմակերպման եւ անցկացման համար օպերատիվ որոշումներ եւ միջոցներ, լուծում է իր իրավասության մեջ մտնող այլ հարցեր:

Գործադիր տնօրինության, նրա կառուցվածքի մասին Կանոնակարգը, նրա ծախսերի նախահաշվարկները եւ աշխատողների թվաքանակը հաստատում է Խորհուրդը:

Գործադիր տնօրինության եւ Խորհրդի գործունեության հետ կապված միջոցառումների ֆինանսավորումը իրականացվում է ցուցահանդես-տոնավաճառների գործունեության, ինչպես նաեւ Գործադիր տնօրինության տնտեսական գործունեության անցկացումից ստացված եկամուտների հաշվին:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

13. Խորհրդի եւ Գործադիր տնօրինության նստավայրը Մոսկվա քաղաքն է:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի ապրիլի 10-ից: